բիայի նմանութիւն բերող քանդակն առնուած է Հայաստանում գոյութիւն ունեցող Աստուածածիններից, հաւանօրէն մի պատկերից, որի ծիրանին սպիտակ գոյն ունէր, որի անունով եւ չինուած է վանքը: Հայաստանում կային Ծիրանաւոր, Կարմրաւոր անունով պատկերներ, որոնց անուան եւ եկեղեցիներ կային:

Մեր գերեզմանական կոթողների վերայ Աստուածածինների պէսպիսութիւնները, որոնց մէջ եւ Օդիգիտրիայի նստած եւ կանգնած տիպերը, հաստատում են այս իրողութիւնը: Նախ թուենք մեզ ծանօթ այդպիսի քանդակները մինչեւ Զ. դարի վերջերը կամ Է.-ի սկիզբը, որ տեսանք իրենց տեղերում: Երկու այդպիսի քանդակներ տեսանք Օձունում, մէկը տաճարի պատի մէջ դրուած (Պատկ. 28), միւսը սրահի (portique) արեւմտեան դարբասի դլխին (Պատկ. 26): Երրորդը Կողբի աւերակների մէջ (Պատկ. 57), չորրորդը Մահմուդճուղում, արեւելեան Շիրակում, Արթիկից եւ Լմբատավանքից ոչ հեռու (Պատկ. 16), հինգերորդը եւ վեցերորդը Թալինում (Պատկ. 73. 79), եօթներորդը Հաղի Բայրամում՝ Արագածի հարաւային լանջին (Պատկ. 30), ութերորդը ոչ հեռու այստեղից եւ Ուլան-Վիժանից, Խարբաւանքում (Պատկ. 94), իններորդը Եղուարդում (Պատկ. 34) դարձեալ կանգնած դիրքով, ինչպէս Մահմուդճուղինը: Տասներորդը Հառիճում (Պատկ. 93), տասնումէկերորդը Լոռիի Իդահատ կամ Այդեհատ գիւղում: Այսքան միայն մեզ յայտնի, եւ պէսպիսութիւններով:

Դոցանից Օձունի եւ Կողբի Աստուածածինները Օդիգիտրիայի նստած տիպին նման են, իսկ Մահմուդճուղինը եւ Եղուարդինը կանգնած: Օձունի եկեղեցու հնութեան մասին խօսել ենք. համարում ենք Ե. դարի վերջերի, ամենաուշը Զ.-ի սկիզբների. Եղուարդի եկեղեցիները, մեծը Զ. դարի երկրորդ կիսի, իսկ մի նաւանին աւելի հին՝ Ե. դարի: Մահմուդճուղինը Է. դարից առաջ, ոչ ուշ քան Զ. դարի վերջերը. նման լինելով եռախորան եկեղեցիներին իւր յատակագծով, ունի առանձնայատուկ կողմեր եւս: Իրաւունք ունի Սարչիպովսկին, թէ Die Kirche erweckt den Eindrack hohen Alters — եկեղեցին խորին հնութեան տպաւորութիւն է թողնում:* Եկեղեցիների հնութեամբ էլ պիտի որոշուին քանդակների մօտաւոր հնութիւնը:

Պատկ. 104

Մահմուդճուղի Աստուածածինը կանգնած դիրքով, Յիսուս մանուկը ձախ թեւին, խմբանկարի կեդրոնն է կազմում, տարաբաղդաբար եղծուած վիճակում եւ ոչ ամբողջութեամբ, բայց մնացորդներից դատելով, կարող ենք ամբողջացնել խմբանկարը: Ձախ կողմից սաւառնող հրեշտակը թաշկինակով մի բան ունի բռնած, որ մատուցանում է որդուն եւ մօրը. նոյնը պիտի լինէր եւ միւս կողմից, նկատելի է կախուած թաշկինակի մի մասը: Աւելի ցած, դարձեալ ձախ

*Die Baukunst der Armenier եր. 501: